

Գլխավոր տեղեկություն

Номер	N 386-Ն
Տիպ	Որոշում
Тип	Официальная Инкорпорация (04.01.2016-23.06.2018)
Статус	Չի գործում
Первоисточник	ՀՀՊՏ 2007.04.25/22(546) Հոդ.529
Принят	ՀՀ կառավարություն
Дата принятия	22.03.2007
Подписан	ՀՀ վարչապետ
Дата подписания	07.04.2007
Վավերացնող մարմին	ՀՀ Նախագահ
Վավերացման ամսաթից	14.04.2007
Дата вступления в силу	01.05.2007
Ուժը կորցնելու ամսաթիվ	23.06.2018

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
14 ապրիլի 2007 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2007 թվականի N 386-Ն

**ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ, ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ (ԽԱՂԱՍՐԱՀՈՒՄ) ԻՆՏԵՐՆԵՏ ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՐԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՐՄԻՑ
ԴՐՈՇՄԱՎՈՐԵԼՈՒ, ԿՆՔԵԼՈՒ ՈՒ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 26.11.15 N 1496-Ն)**

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 86⁻-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

(Նախաբանը փոփ. 26.11.15 N 1496-Ն)

1. Սահմանել՝

1) տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնի կողմից դրոշմավորելու, կնքելու ու հաշվառելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) համակարգիչների դրոշմավորման, կնքման ու հաշվառման կտրոն ստանալու դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) հարկային մարմնի կողմից դրոշմավորված, կնքված ու հաշվառված համակարգիչները գործունեության այլ վայր տեղափոխելու վերաբերյալ ծանուցման ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

4) հարկային մարմնի կողմից դրոշմավորված, կնքված ու հաշվառված համակարգիչները կիրառումից հանելու վերաբերյալ ծանուցման ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

(1-ին կետը խմբ. 26.11.15 N 1496-Ն)

2. Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի, ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները սույն որոշմամբ սահմանված կարգով ենթակա են դրոշմավորման, կնքման և հաշվառման՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի մայիսի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ս. Սարգսյան

2007 թ. ապրիլի 7
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
մարտի 22-ի N 386-Ն որոշման

(գլխագիրը փոփ. 26.11.15 N 1496-Ն)

Կ Ա Ր Գ

**ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ, ԱՆՄԻԶԱԿԱՆՈՐԵՆ (ԽԱՂԱՍՐԱՀՈՒՄ) ԻՆՏԵՐՆԵՏ
ՏՈՏԱԼԻԶԱՏՈՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ
ՄԱՐՄՆԻ ԿՈՐՄԻՑ ԴՐՈՇՄԱՎՈՐԵԼՈՒ, ԿՆՔԵԼՈՒ ՈՒ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ
(վերնագիրը փոփ. 26.11.15 N 1496-Ն)**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում է տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները հարկային մարմնի կողմից դրոշմավորելու, կնքելու և հաշվառելու գործընթացը:

(1-ին կետը փոփ. 26.11.15 N 1496-Ն)

2. Տոտալիզատորի, անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչները դրոշմավորվում, կնքվում և հաշվառվում են տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչների (այսուհետ՝ կազմակերպիչ) հաշվառման վայրի հարկային տեսչության (այսուհետ՝ հարկային տեսչություն) կողմից:

(2-րդ կետը փոփ. 26.11.15 N 1496-Ն)

II. ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ, ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

3. Կազմակերպիչները մինչև գործունեություն սկսելը տոտալիզատորի և անմիջականորեն (խաղասրահում) ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված համակարգիչների դրոշմավորման, կնքման ու հաշվառման համար ներկայացնում են համակարգիչների դրոշմավորման, կնքման ու հաշվառման կտրոն (այսուհետ՝ հաշվառման կտրոն) ստանալու մասին դիմում՝ համաձայն սույն որոշման N 2 հավելվածի:

Դիմումը լրացվում է՝

1) թղթային տարբերակով և ներկայացվում հարկային տեսչության կամ

2) էլեկտրոնային եղանակով և ներկայացվում հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի էլեկտրոնային հաշվետվությունների բաժնի միջոցով (<https://file-online.taxservice.am>):

(3-րդ կետը խմբ. 26.11.15 N 1496-Ն)

4. Հարկային տեսչությունը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպիչին հատկացնում է հաշվառման կտրոն՝ դիմումում նշված թվին համապատասխան: Ընդ որում, հատկացվող հաշվառման կտրոնների թիվը չի կարող գերազանցել օրենքով սահմանված կարգով ներկայացված ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունում նշված համակարգիչների թիվը:

(4-րդ կետը փոփ. 26.11.15 N 1496-Ն)

5. Համակարգիչի դրոշմավորումն ու կնքումը կատարվում է համակարգիչի վրա հաշվառման կտրոն փակցնելու միջոցով:

6. Հաշվառման կտրոնը միակողմանի քարտի տեսքով ինքնասոսնձվող, մեկանգամյա օգտագործման համար նախատեսված, խիստ հաշվառման փաստաթուղթ է: Հաշվառման կտրոնն ունի սերիա և չկրկնվող հերթական համար: Հաշվառման կտրոնի նմուշը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետը:

1. Կազմակերպչի անվանումը							
2. Կազմակերպչի գտնվելու վայրը							
3. Կազմակերպչի ՀՎՀՀ-ն							
4. Գործունեության տեսակը							
5. Լիցենզիայի							
	(սերիան)	(համարը)		(տալիու օրը, ամիսը, տարեթիվը)			
6. Հեռախոսահամարը							

Համակարգիչների դրոշմավորման, կնքման ու հաշվառման համար խնդրում եմ հատկացնել հետևյալ թվով հաշվառման կտրոններ՝

NN ը/կ	Գործունեության իրականացման վայրը (հասցեն)	Հաշվառման կտրոնների թիվը	
		թվով	տառերով
1.			
2.			
3.			
4.			

Տնօրենի (պաշտոնատար անձի)

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

Դիմումը ներկայացնելու ժամկետը _____ 200__ թ.

(հավելվածը լրաց., փոփ. 26.11.15 N 1496-Ն)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2007 թվականի
մարտի 22-ի N 386-Ն որոշման

ՁԱ

_____ հարկային
տեսչության պետ _____

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՐՄԻՏ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԱԾ, ԿՆՔՎԱԾ ՈՒ ՀԱՇՎԱՌՎԱԾ
ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կազմակերպչի անվանումը	
2. Կազմակերպչի ՀՎՀՀ-ն	
3. Գործունեության տեսակը	
4. Լիցենզիայի _____ (սերիան) (համարը) (տալու օրը, ամիսը, տարեթիվը)	
5. Հեռախոսահամարը	

Հայտնում եմ, որ գործունեության իրականացման հետևյալ վայրում (հասցեում)՝

օգտագործվող համակարգիչները, որոնց փակցված են հարկային մարմնի կողմից տրամադրված ստորև նշված հաշվառման կտրոնները, ----- թվականի -----ից

(տարեթիվը)

(ամիսը) (օրը)

օգտագործելու եմ գործունեության իրականացման այլ (և/որ) վայրում՝ հետևյալ հասցեով՝

:

NN	Հաշվառման կտրոնի սերիան և համարը	Հաշվառման կտրոնը տալու օրը, ամիսը, տարեթիվը

Տնօրենի (պաշտոնատար անձի) _____

(ստորագրությունը)

(անունը, ազգանունը)

_____ 24
տեսչության պետ _____ հարկային

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԴՐՈՇՄԱԿՈՐԿԱԾ, ԿՆՔՎԱԾ ՈՒ ՀԱՇՎԱՌՎԱԾ
ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ ԿԻՐԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կազմակերպչի անվանումը	
2. Կազմակերպչի ՀՎՀՀ-ն	
3. Գործունեության տեսակը	
4. Լիցենզիայի _____ (սերիան) (համարը) (տալու օրը, ամիսը, տարեթիվը)	
5. Հեռախոսահամարը	

Հայտնում եմ, որ գործունեության իրականացման հետևյալ վայրում (հասցեում)՝

օգտագործվող համակարգիչները, որոնց փակցված են հարկային մարմնի կողմից տրամադրված ստորև նշված հաշվառման կտրոնները, ----- թվականի -----ից
(տարեթիվը) (ամիսը) (օրը)

կիրառումից հանվում են:

NN	Հաշվառման կտրոնի սերիան և համարը	Հաշվառման կտրոնը տալու օրը, ամիսը, տարեթիվը

Տնօրենի (պաշտոնատար անձի) _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

(հավելվածը լրաց. 26.11.15 N 1496-Ն)

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ

[01.06.2018, N 613-Ն](#)

[26.11.2015, N 1496-Ն](#)

Համապատասխան ինկորպորացիան

[23.06.2018, N 386-Ն](#)

04.01.2016, N 386-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ

Համապատասխան ինկորպորացիան

